զպակասորդ տրոց նախընթաց տարւոյն, պատճառանօք վանաց կամիմ ընուլ. ոչ այդպէս՝ զիտէ տէր զի չէնքն այն կարի անհեդեդ թուեցաւ ինձ, որոյ վասն խնդրեցի ըզ-զիրն, տեսանել թէ ո՞րպիսի ինչ իցէ։ Ապա դարձուցեալ զբանս իւր ցերիս Փոխանորդս աղերսէ 'ի նոցանէ չգրել դանկատանս զնմանէ 'ի Դուռն. զի նախընթաց ամին Լատինք կամ դեսպանն Գաղղիոյ դանկատեալ, և 'ի քննութեան պահու արկին զայն 'ի վերայ Հայոց, և սաստեալ վարեցին զփոխանորդ նոցին յատենէ անտի. զնոյն արարին եւ փոխանորդին Լատինաց, դգուելով զՑոյնս իբրեւ զոհ զինքենէ։ Յետ այսր ամենայնի Ցոյնք կրկին հրաման առին նորոգել զՊատանատեղին և զԳողգոթայ, եւ սալել զտանիս Ս. Եղիայի վանաց, 'ի ճանապարհին Բեթղեհէմի, և զտին համարձակութիւն 'ի քաղաքին և անխնայ վատնէին զդանձս իւրեանց 'ի վնաս Հայոց, յորոյ վերայ զարմացեալ էին Լատինք, (1764. 'ի 1 Յունվարի)։

Միաբանք Յունաց իբրու թէ հանդարտեալ երեւէին ժամանակս ինչ, ահա դարձեալ սկսան խլրտիլ. զի ամբաստանեցին զՀայս առ դատաւորն. իբրեւ թէ գերեզմանն Ս. Աստուածածնի 'ի սկզբանէ անտի լեալ իցէ 'ի ձեռս Յունաց, իսկ Հայք օգնութիւն դտեալ 'ի Լատինաց և զօրութեամբ դրամոց և հրովարտակին դրաւեցին զեկեղեցին զայն. նոյնպէս և 'ի մեծ եկեղեցին Բեթղեհէմի կախեցին կանթեղս և զայլ զարդս, որով նեղեն զՑոյնս. զի յառաջագոյն Սուլթան Մահմուտ Արքայ տուեալ էր զնոսա Յունաց, և Հայք միայն հրաման ունէին երթալ յուխտ 'ի տարւոջ մի կամ զաւուրս երկու։ Խնդրեմք այժմ զի ողորմեսցի Արքայ չնորհել մեզ հրովարտակ 'ի բառնալ 'ի տեղեացն այնոցիկ զկանթեղս եւ զարդս, զորս եդին Հայք։ Իսկ դատաւորն առանց ունկն դնելոյ գրոց և բանից Հայոց, դրեաց 'ի Դուռն զոր միանգամ յայտ արարին Ցոյնք։ Այլ իբրեւ իրազգաց եղեւ Կարապետ Պատրիարք, կոչեաց զդատաւորն 'ի գիշերի 'ի վանս, եւ ետ ընթեռնուլ նմա զհին և զնոր հրովարտակս. եւ իբրեւ 'ի միտ առ զսխալանս իւր, ասէ. թէ Ցոյնք խաբեցին զիս և առին զայնպիսի գիր 'ի ձեռաց իմոց. ապա գրեաց զերկուս գիրս, մին թէ Ցոյնք խաբէյութեամբ առեալ են